նել առ նա աղաւթս, զի այնու շրջիցեմ զկամս նորա: *39* Այլ այն՝ որ արար զամենայն յոչնչէ, եւ ունի զտիեզերս ի ձեռին իւրում եւ զամենայն բնակիչս նորա իբրեւ զմարախ, որ չափեաց զերկինս թզաւ եւ զերկիրս ամենայն քլաւ իւրով, որ եդ զլերինս ի կշիռս եւ եբարձ զդաշտս կշռորդաւք, որ գիտաց զիմաստութիւն Հաւր իւրոյ եւ եղեւ նմա խորհրդակից, որ ընդ Հաւրն առնէ զամենայն վճիռ դատաստանաց, դեռ այժմ իսկ զարեւելս եւ զմուտս, զհիւսիսի եւ զհարաւ եդեալ ի կշիռս, եւ դեռ զկշիռսն ի վեր ունի. եւ ըստ մի մի ծանրութեան, յոր կողմ հակեսցէ կշիռն մեղացն, ըստ այնմ եւ դատի զարարածս իւր: *40* Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, եւ ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա. զի դեռ այժմիկ ժամանակ է կշտամբութեան եւ ժամանակ յանդիմանութեան եւ ժամանակ դատելոյ. զի դեռ աւադիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ճակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել զերկիր: *41* Արդ դեռ յայսմ ժամուս ժամանակս դատաստանաց է, ո՞վ է որ կարէ իշխել բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս, եւ կամ ո՞վ է որ գիտէ զմիտս Տեառն, զի եւ խրատտու եւս լինիցի նմա. զի ամենայն ինչ ի նմանէն եւ ի նոյն եւ նովաւ ամենայն. նմա փառք յաւիտեանս: *42* Զի թէ ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ Տէր, մեզ ընդդէմ կամաց նորա մի՛ լիցի երթալ, եւ խնդրել ինչ ի նմանէ. այլ ասել՝ եթէ Յիրաւունս անցուցեր դու զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու Տէր, եւ ամենայն գործք քո ճշմարիտ են: *43* Ճանապարհք քո ուղիղ են, եւ ամենայն դատաստանք քո ուղիղ են: *44* Զի զդատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր, ըստ ամենայնի զոր ինչ ածեր ի վերայ մեր. զի արդարութեամբ եւ յիրաւի ածեր ի վերայ մեր վասն մեղաց մերոց: *45* Զի անաւրինեցաք եւ յանցեաք եւ ապստամբեցաք մեք ի քէն. մեղաք յամենայնի եւ պատուիրանաց քոց ոչ անսացաք: *46* Ոչ պահեցաք եւ ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գտցուք մեք ի քէն. արդ զամենայն զոր արարեր եւ զոր ինչ ածեր ի վերայ մեր՝ արդար դատաստանաւ արարեր. զի դատաստանք քո քաղցր են: *47* Արդ մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուան քո, փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց, եւ փառաւոր արա զանուն քո, Տէր. զի մի՛ երբէք ամաչեսցեն ոյք յուսացեալ լինին ի քեզ: *48* Ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, եւ ամենայն զաւրութիւնք նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես Տէր Աստուած միայն, որ փառաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց: *49* Եւ յամենայնի ամենեւին քո միայնոյ կատարեսցին կամք քո ամենազաւր, որ հզաւրդ ես եւ կարող եւ արդար յամենայնի, եւ սիրես ողորմել նեղելոց եւ տագնապելոց: *50* Զաւգուտն մեր դու գիտես, Տէր, եւ պատրաստել մեզ որպէս եւ քեզ հաճոյ իցէ. զի եթէ իցէ մեզ աւգուտ նեղութիւնք յաճախեա մեզ. եւ եթէ հաճոյ է առաջի քո ողորմութիւն, շնորհեա մեզ: *51* Զի որպէս իցեն կամք Տեառն յերկինս, սոյնպէս եւ կատարեսցէ. եւ որով գաւազանաւ կամի-